

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուրլի, կես տարվանը 6 բուրլ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բաւին 2 կոպեկ.

ԲՈՎԱՆԴԱՊՈՒԻՆ

Որտեղ պէտք է հիմնվել օրինակելի շերամա-
տունը. Նամակ Աւերապետական. Ներքին լուրեր.
— ԱՐՏԱՐԻՆ ԵՒ ՏԵՍՏԱՐԻՆ. «Հայրենիք» լրագրի
կարծիքը. Արտաքին լուրեր. — ԽՈՒՐԵՐ. —
ՀՆՈՒՂԻՐՆԵՐ. — ԲՈՐՍՍ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երկու խօսք եկեղեցական
վարութեան մասին.

ՈՐՏԵՂ ՊԵՏԻ Է ՀԻՄՆԱԿԵՐ ՕՐԻՆԱԿՆԵՐ ՇԵՐԱՄԱՍՈՒՆԸ

Երբ որ մեր մամուլը խոսում է Թիֆլիսի
Մուշտայրի այդու այժմեան վիճակի մե-
տին, նա մեծ մասամբ խոսում է այն տե-
տակետից, որ դարևոր ծառերը կարողվելով
և հոյակապ բազմաթիւ շինութիւններ կա-
ռուցվելով այդու մէջ, Թիֆլիսցիների
միակ զբօսավայրը փչացել է, քաղաքումս
պակասել է այնպէս էլ հազարապետ բու-
սակառութիւնը, քաղաքիս բնակիչները ա-
մուլայ օտթ օրերում այլ ևս ոչ մի տեղ
չունեն փոքր ինչ մաքուր օդ շնչելու, և
այլև...

Բայց նայե՛ք Մուշտայրը այդու օրի-
նակի շերամատան կառուցվում իրողու-
թեան վրա և ուրիշ բուն գործնական տե-
տակետից, քաղաքին այդ տեսակ կենտրո-
նում շերամատան դրոշմեան նպատակա-
յարմար կամ աննպատակաբար լինելու
տեսակետից:

Նախ ամեն փոքր ի շատէ փորձված շե-
րամատան հիմն, որ շերամի որդը պահե-
լու, նրանից ընտիր բոժոժ, լաւ թել և
պիտանի սերմ ստանալու համար, մեծ ըզ-
գուշութիւն և առանձին յարմարութիւն-

ներ են հարկաւոր: Հարևար հազար բնակիչ
ունենցող մի մեծ քաղաքում, որտեղ օդն
այնպէս էլ մաքուր չէ կարող լինել, որտեղ
միշտ թող է լինում, որտեղ նոյն իսկ փակ
պատուհանների ձեղքերից թողը մանրով
աւերում է կօծուր, մի մեծ քաղաքում, որ-
տեղ միշտ աղմուկ է լինում, երաժշտու-
թիւն, կառքերի ձայներ և այլն և այլն, —
անհնարին է օրինակելի կերպով պահել
շերամի որդը: Յայտնի է որ շերամի որդը
երբ քնի մէջ է գտնվում, կանոնաւոր կեր-
պով զարգանալու համար, անպայման հան-
գստութիւն է պահանջում:

Միթէ օրինակելի շերամատան հիմնա-
դիրները Թիֆլիսի պէս մեծ կենտրոնի այ-
դինից մինում՝ այդ բոլորը չը դատեն:
Անկարելի է, որ այդ փորձված շերամա-
պահները այդ չը գիտնային... Ուրեմն
սակամայ մարդն այն է մտածում, որ գոր-
ծին զուրկ կանգնած պաշտօնեաները աւե-
լի իրանց անձնական հանդիսան ունեն
աւելի առաջ: Ուրիշ ի՞նչ բացատրու-
թիւն տանք: Հակառակ դէպքում պէտք է
ընդունելիք, որ գործի ղեկավարները կա-
տարելապէս տգէտ էին և անտեղեակ այն
պարտականութեան տեղեկութիւն-
ներին, որ շերամի որդը չէ կարելի պահել
քաղաքային աղմուկի և քաղաքային թողի
մէջ:

Այժմ նայե՛ք գործի վրա և մի այլ տե-
տակետից:

Երբ որ ուզում եմք հիմնել մի որ և է
օրինակելի հաստատութիւն, լինի դա շե-
րամատան, այգեգործական դպրոց, դիւն-
գործարան, դիւնգործական դպրոց, բամ-
բակի պլանտացիա և այլն, պէտք է աշ-
խատենք հաստատել այդ տեսակ օրինա-
կելի ձեռնարկութիւնները այնպիսի տե-

ղում, այնպիսի շրջանում, որտեղ ազգա-
բնակչութեան մեծ մասը պարագուծ, զբաղ-
վում է արդիւնաբերութեան նոյն ճիւղով,
որպէս զի ժողովուրդը սովորի թէ ինչպէս
պէտք է պարագուծ արդիւնաբերութեան
այս կամ այն ճիւղով: Եթէ ոչ ի՞նչ խոր-
հուրդ կունենար հիմնել զեցուք օրինակե-
լի այգեգործական դպրոց, խօսքի համար,
Նիֆիլի-Նովորոզում, կամ Մոսկովայի նա-
հանգում, որտեղ խաղող էլ չէ բուսնում,
կամ ի՞նչ միտք կունենար հիմնել օրինա-
կելի շերամատան դպրոց Վորոնէժում, որ-
տեղ ցուրտ կլիման չէ էլ թոյլ տալիս շե-
րամատան հիմնում պարագուծ...

Կրիմում խաղող է բուսնում, Կրիմում
ժողովուրդը պարագուծ է այգեգործու-
թեամբ և դիւնգործութեամբ, — այդ պատ-
ճառով շատ խելացի բան է, որ Կրիմում,
Ելալայի մօտ, հիմնված է այգեգործական
և դիւնգործական դպրոց:

Մեր շերամապահ ազգաբնակչութիւնը
կենտրոնացած է Երևանեան նահանգում
Նումանպէս և Նուխու կողմերում և Գան-
ձակ նահանգի այլ և այլ տեղերում, և
որովհետեւ այդ ազգաբնակչութիւնը պարա-
պուծ է շերամապահութեամբ մեծ մասամբ
նահանգեական ձևով — վերին աստիճանի
նպատակաբար կը լինէր հիմնել օրինա-
կելի շերամատան վերջինշեւ շերամապահ
կենտրոններում, որպէս զի ժողովուրդը օրի-
նակ առնէ թէ ինչ ձևով պէտք է պահել
շերամը՝ գիտութիւնից մշակված կանոնե-
րին համեմատ:

Բայց ի՞նչ միտք ունի հիմնել օրինակելի
շերամատան այնպիսի մի ահաբի կենտ-
րոնում, ինչպէս Թիֆլիս քաղաքն է, այն էլ
Վրաստանի պէս մի երկրում, որտեղ ժողո-
վուրդն ամենեւին չէ պարագուծ շերամա-

պահութեամբ: Կա նոյնը կը լինէր, եթէ
մենք հիմնէինք դիւնգործական դպրոց, զի-
ցուք Ստավրոպոլում:

Մենք աւելի կասե՛ք. թէ և ամբողջ Ե-
րևանեան նահանգը պարագուծ է բամբա-
կացանութեամբ, բայց դարձեալ միտք չու-
նէր բամբակի օրինակելի պլանտացիա
զարգացնել Երևան քաղաքում գտնվող Սար-
գարի այգիում, այլ այդ տեսակ օրինակելի
պլանտացիա պէտք է զարգացնել զիւղա-
կան շրջանում, բամբակացանութեամբ պա-
րագուծ ամենախիտ զիւղական ազգաբնա-
կութեան մէջ:

Այդպիսով մեր կարծիքով բամբակի օ-
րինակելի պլանտացիա պէտք է հիմնվել
Երևանեան նահանգի զիւղական շրջանում,
դիւնգործական օրինակելի դպրոց պէտք է
հիմնվել կամ Կախէթում կամ Երևանեան
նահանգում, օրինակելի շերամատան պէտք
է հաստատվել կամ Երևանեան նահան-
գում, կամ Նուխում և այլն:

Եթէ ոչ այդ բոլոր անտեղի շէքեր, ա-
պարդիւն ծախսեր տեսնելով, աւելի առջև
ունենալով այն սարօրինակ երևոյթը թէ
այս կամ օրինակելի հաստատութիւնը,
այս կամ այն օրինակելի ձեռնարկութիւնն
իրաւորվում է ուղիղ այնպիսի կենտրոն-
ներում, որտեղ շրջապատող ժողովուրդը չէ
պարագուծ այս կամ այն արդիւնաբերու-
թեան ճիւղի մշակութեամբ, — ակամայ մար-
դըս այն եղանակացութեան է դալի թէ
այդ բոլորը կատարում են մարդիկ աւելի
իրանց անձնական հանդուտի համար, քան
թէ ընդհանրական օդի համար:

Գ. Ա.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԵՎԻՈՒ ԽՕՍԻ ԵՎԻՆԵՑԱԿԱՆ ՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱ- ՍԻՆ

Քրիստոսի եկեղեցին է Քրիստոսին հաւատա-
ցողների միաբանութիւնը:

Հայկական քրիստոնէական եկեղեցին է ընդ-
հանրական-առաքելական եկեղեցու մի հաւաքա-
կան անդամը՝ հիմնված առաքելական և մարդա-
բնական հիմունքների վրա: Հայկական քրիստո-
նէական եկեղեցին, որպէս և ամենայն եկեղեցի՝
ունի իր մէջ երկու դաս, այն է՝ դաս ուսուցա-
նող և դաս ուսանող: Ուսուցանող դասը կոչվում
է ուսուցանող եկեղեցի, սրբապատուութիւն, նուր-
բապետութիւն, հոգեւոր վարչութիւն, քահանայա-
պետութիւն և այլն. ուսանող եկեղեցին է հաւա-
տացիալ հոգը կամ ժողովուրդը: Առաքելական
հիմունքներին համեմատ՝ ուսուցանող եկեղեցուն
ընծայվածները նախ ընտրվում են և ապա սրբա-
գործվում առաքելական ձեռնադրութեամբ: Ընտ-
րութեամբ, ձեռնադրութեամբ և օժմամբ պահ-
պանվում է եկեղեցու մէջ քահանայութեան
կարգը, իր կօթն աստիճաններով: Աստիճաններին
նայած՝ երկու կարգի է բաժանվում սրբաբարձու-
թիւնը. այն է ձեռնադրութեամբ և արթնքով
արթնած կարգի աստիճաններ, որպէս ևս զոնա-
պետութեան, ընթերցողութեան, ջահընկալու-
թեան, կրթասարկաւարութեան և սարկաւարու-
թեան աստիճանները, որ և կոչվում են փոքր
կամ խոնարհագոյն աստիճաններ. իսկ արթնքով
ձեռնադրութեամբ և օժմամբ արթնած է սրբա-
մեծ աստիճանը, որ է քահանայութիւնը: Քահա-
նայութիւնը պարունակում է իր մէջ նուիրակե-
տական երկու մեծ և վերին իշխանութիւնը, այն
է՝ երկուցութիւն և եպիսկոպոսութիւն:

Եկեղեցու հովութիւնը, ուսուցողութիւնը կամ
վարչապետութիւնը և հոգեւոր կառավարչութիւնը

յանձնված է երկուցութեան և եպիսկոպոսութեան՝
եկեղեցու հիմնադրից: Եպիսկոպոսներն են Քրիս-
տոսի առաքելայինը, երեցները կամ բանասերն
են նրա աշակերտները: Եկեղեցու վերին տեսութիւ-
նը յանձնված է թէ ս. Գրքի և թէ առաքելական և
եկեղեցական օրինաբանութեան համեմատ՝ եպիս-
կոպոսութեան: Եկեղեցու խորհրդակառարութեան
կամ սրբապատուութեան նկատմամբ չը կայ ոչ մի
խտիր կամ սարբերութիւն եպիսկոպոսների մէջ.
Բայց խտիր է տարբերութիւն կայ նրանց վար-
չական իշխանութեան նկատմամբ:

Առաքելական և եկեղեցական սահմանադրու-
թեան համեմատ՝ մասնաւոր կամ թաղական ու
զիւղական եկեղեցիներում, ուր մէկը աւելի քա-
հանանի կան, մէկը նրանցից լինում է աւագ
ընտանադրութեան և սա է այն եկեղեցու
կառավարիչը. բայց ինքն էլ ստորադրվում է իր
վիճակաւոր եպիսկոպոսի իրաւասութեանը: Բոլոր
մասնաւոր վիճակները եպիսկոպոսները պէտք է
ստորադրվին՝ մասնաւոր վիճակներն իր մէջ պա-
րունակող կեդրոնին կամ մայր աթոռի եպիսկո-
պոսին, որ կոչվում է աշխարհի եպիսկոպոս —
«Գլխաւոր եպիսկոպոս» — «Եպիսկոպոսապետ» —
«Հայրապետ» — «Կաթողիկոս» — այն:

Հայաստանից եկեղեցիները մայր եկեղեցին
լինելով ս. Էջմիածինը, որպէս առաջին աթոռ ս.
Գրիգոր Լուսաւորչի, պատմական և օրէնսդրա-
կան հիմունքների համեմատ՝ եպիսկոպոսապետը
կամ կաթողիկոսը նա է, ով որ առաքելական
ընտրութեամբ, այսինքն՝ համայն ազգի հաւանու-
թեամբ, և քահանայապետական ձեռնադրութեամբ
ու օժմամբ՝ կարգվում է յաշորդ թաղէտ և Բար-
դղիմէտ ս. առաքելայինի և ժառանգ ս. Լու-
սաւորչի գահին:

Հայոց առաքելական և լուսաւորչական եկեղե-
ցուն պատկանող համայն հաւատացեալների, թէ
հոգեւորականների և թէ աշխարհականների, թէ
ուսուցանող և ուսանող եկեղեցու հոգեւոր միու-
թեան գլխուն է ամենայն հայոց եպիսկոպոսա-
պետը կամ հայրապետը, որ կառավարում է ա-

ռաքելական եկեղեցին առաքելաբար՝ ըստ ամե-
նայնի: Նա է եկեղեցու ընդունած հաւատքի
վարդապետութեան, ծէսերի, արարողութիւնների
և նուիրական աւանդութիւնների պահպան իշ-
խանաւորը: Նրա հիւանդութեան, բացակայու-
թեան և մահվան միջոցներում թէպէտ և եղև են
տեղակալներ, բայց ոչ միջտեղակալ, լինէր այդ
մի անձն թէ մի հաւաքական մարմին՝ իրաւունք
չէ ունեցած որ և իցէ մի փոփոխութիւն անել
եկեղեցու ընդունված հաւատքի, վարդապետու-
թեան, ծէսերի, արարողութիւնների և նուիրա-
կան աւանդութիւնների մէջ, այն պատճառով,
որ ինքն կաթողիկոսն ևս ինքնազուրկ և ինքնիշ-
խան իրաւունք չէ ստացած այդ բաների մէջ
փոփոխութիւններ անելու, այլ միայն և եթ
պաշտպանելու և տարածելու:

Եկեղեցու կարգերի մէջ որ և է փոփո-
խութիւն անելու իրաւասութիւնը պատկանում է
միմյան լրացեալ եկեղեցուն, այն է՝ ուսուցանող
և ուսանող եկեղեցու ամբողջութեան և ոչ մա-
սին: Արդ՝ ինչ որ եկեղեցու լրութիւնն ու ամ-
բողջութիւնն օրէնքի և նուիրական աւանդու-
թիւնների միջոցով յատկացրել է կաթողիկոսի
աստիճանին և իրաւասութեան, այն ամենը միան-
գամայն անհարգելի են կաթողիկոսական իշ-
խանութիւն չը վայելողին: Բայց կաթողիկոսա-
կան իշխանութիւնը պարունակում է իր մէջ հա-
զարդելի և անհարգելի իրաւասութիւններ:

Անհարգելի է այն իրաւասութիւնը, որ վե-
րաբերում է զուտ կրօնական-եկեղեցական
ինքնիշխանին և կաթողիկոսական իշխանութեա-
նը միայն: Հարգելի են այն ամենը, որ
բնութ չեն միջաբերում զուտ կրօնական-եկեղե-
ցական և կաթողիկոսական բուն իշխանութեան
ինքնիշխանին և գործերին: Հարգելի իրաւունք-
ներն անցնում էին կաթողիկոսական տեղակալե-
րին, երբ կաթողիկոսը լինում էր բացակայ իր
թիւն և երբ աթոռը լինում էր թափուր կա-
թողիկոսի մահվան պատճառով՝ կամ այլ պատ-
ճառներով, օրինակ՝ գահընկեցութեամբ, տարա-

գրութեամբ, ընտրութեան յետաձգութեամբ և
այլն:

Աչքի առաջ ունենալով տեղակալների շարքը և
նրանց կատարած գործերը, որ նոյն այս էջերի
մէջ մանրամասնօրէն թուած լինելով մենք էլ ա-
ռաջ չենք բերում, տեսնում է, որ նախ տեղա-
կալներ եղած են եպիսկոպոսներ, երբեմն և
վարդապետներ և ժամանակաւոր կաթողիկոսներ
ևս, երկրորդ՝ որ տեղակալներն են եղել կաթո-
ղիկոսների բացակայութեան և աթոռի թափուր
եղած միջոցներին եկեղեցական ընթացիկ գործե-
րին ընթացք տուողները, երրորդ՝ որ զրանցից
մէկը, Յովնանեան մանաղիկոսը՝ նոյն իսկ եկե-
ղեցական ժողով ևս կազմեց, երբ կաթողի-
կոսի ընդունած քաղկեդոնականութիւնը մերժեց
և ազգային եկեղեցու իրաւունքներին պաշտպան
հանդիսացաւ: Հիմնվելով վերոգրեալ փաստերի
վրա՝ չենք կարող ընդունել այն կարծիքը թէ՛
տեղակալների պաշտօնը կայանում էր եկեղեցա-
կան անտեսական մասի վերահսկողութեան մէջ
միայն: Ընդհակառակը երևում է, որ տեղակալու-
թեան պաշտօնը նուիրապետութեան մէջ աւելի
մեծ պաշտօն էր, քան թէ լոկ տեսուչութեան վրա
հսկելու պաշտօնը:

Այժմ դանք մինողական սկզբնաւորութեան և
հաստատման մասին ևս մի երկու խօսք անել:

1783 թիւից՝ Գուգուս կաթողիկոսը նախ առա-
ջինը եղաւ, որ նախազօքց ամբողջ սկզբնաւորու-
թեան ծրագրերը: Այս ծրագրին համեմատ սինօզի-
անդամների թիւը պիտի լինէր վեց և անդամները
պէտք է լինէին արքեպիսկոպոսներ և եպիսկո-
պոսներ: Այս ժողովի պաշտօնն էր լինել խոր-
հրդակից կաթողիկոսին: Երկր թէ այդ ժողովը
չը պահեց իր դրոշմիւնը շարունակ: Այդ երե-
ւում է նրանից որ 1802-ին Գանիլը կաթողի-
կոսանալով՝ իր կուսակիցներին նոր առաջարկու-
թիւն է անում կաթողիկոսի ժողով այնպիսի իրա-
ւունքներով, որ ոչ կաթողիկոսը առանց այն ժո-
ղովի հանձնութեան և ոչ ժողովը առանց կաթողի-
կոսի հաւանութեան կարենան անօրինակ գործեր,

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԿԱՆՔԻ

Օգոստոսի 14-ին

Այս օրերս Ախալցխայի հայ-կաթօղիկաց հոգեւոր կառավարութիւնը շրջաբերական գրութեամբ յայտնում է Ախալցխայի բոլոր հայ-կաթօղիկ եկեղեցիներին, Նորին Մեծնութեան թագաւոր Կայսր յովսէփի 16-ին 1886 թ-ի հաստատած հետեւ կարգադրութիւնները, որոնք վերաբերում են Ախալցխայի հայ-կաթօղիկ հասարակութեան արտադր կազմակերպութեանը:

ա) Ղարբի և Բաթմալի շրջաններում արդող հայ-կաթօղիկները կրօնական վարչութեամբ են թարգմանում կաթօղիկ հոգեւոր կառավարութեան իշխանութեանը, ինչպիսիք Սարատովի լատին եպիսկոպոսի իրաւասութեան տակ: Բ) Հայ-կաթօղիկ քահանայներին և ժողովրդին իրաւունք է տրվում Ախալցխայի հոգեւոր կառավարութեան համար երեք նոր անդամներ ընտրել, որոնք պէտք է կառավարութիւնից ստանան տարեկան 500 ռուբլի, դիւանական ծախս՝ 200 ռուբլի և քարտուղարին 300 ռուբլի: Գ) Ախալցխայի նորող վերակազմեալ հոգեւոր կառավարութեան իրաւանց սահմանները, և ո՞ր չափով Սարատովի լատին եպիսկոպոսի իրաւասութեան ենթարկվելու և զէպի կառավարութիւնը ունենալիք յարաբերութիւնները չպահանջուի ստանալ ներքին հորձիկի նախարարութեան և պ. կառավարչացուտի որոշմամբ: Կ) Ախալցխայի հայ-կաթօղիկներին համար պէտք է բացվի հոգեւոր դպրոց քահանայապետի պատրաստելու համար, քաղաքային դպրոցի դասընթացով, մի դաս էլ աւելացած Առտուածաբանութեան աւարկայի համար, այդ դպրոցը պէտք է ստանայ տարեկան 5,000 ռուբլի:

Ե) Արտասահմանում ձեռնարկուած հայ-կաթօղիկ քահանայները իրաւունք չունենան անցնել Ռուսաստան և պաշտօն ստանալ հասարակութեան ծխականներ վանելու, և Ջ) Խաչատու և խաչու արգելում է վրացացու հայ-կաթօղիկ քահանայներին վրաց լեզուն գործածելը հայ-կաթօղիկ եկեղեցիներին մէջ:

Պետ. Բէրուրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՋՈՒՆՅԱՅԻՑ, մեր աշխատակիցի երէկ ստացանք

որոնք վերաբերելն եկեղեցուն, ս. աթոռին և հասարակութեան: Այդ առաջարկութիւնն արտադանելը քանի որ գտնուած էր Մարաղայում: Եւ երբ որ ժամանակի գծուարութիւններին յաղթելով եկաւ իր աթոռը, այն ժամանակ, 1808 թ-ին՝ Ներսէս վարդապետ աշտարակեցու (յետոյ եպիսկոպոս և կաթողիկոս) խորհրդով ու գործակցութեամբ՝ հանդիսով բացեց իր առաջարկած եպիսկոպոսական առեանը—էս. ժողովի խորհրդարան—անուանելով: Ժողովի անդամները կաթօղիկները երկուս վարդապետներ էին: Կահնիկի 1808 թ. օգոստոսի 11-ի մի գրութեան համեմատ ուսաց արժեքներն և ձմեռային էս. ժողովի խորհրդարանի գրութիւնը և իրաւասութիւնը, բայց տաճկահայը չուղեցին ձմեռայնէ այդ:

Կահնիկի մահուանից յետոյ, Եփրեմը կաթողիկոս դառնալով, 1813 թ-ին՝ Կ. Պօլսի պատրիարքարանին առաջարկեց միաբանութեան նկատմամբ վեց յօդուածներ, որոնք են հետեւյալները:
ա) Որ ամիրանները ժողովի կողմից մի հոգեւորական կամ աշխարհական անձն գտնվի էջմիածնի սինոդի մէջ:
բ) Որ տաճկահայք՝ աշխարհականները և հոգեւորականները՝ սինոդի հաստատութեան համար գրաւոր համաձայնութիւն տան և այս համաձայնութիւնը ապաքրվի, անդուլի (անփոփոխ) մնալու համար:
գ) Որ կաթողիկոսի հաստատութեան պարսից տուած հրովարտական համեմատ սուլթանի հրովարտակի մէջ ևս սինոդը կաթողիկոսին գործակից շարակաբով:

դ) յօդուածի մէջ ասված է, թէ Վրացի կաթողիկոս, սինոդի և Կ. Պօլսի պատրիարքարանի հաճութեամբ, հայրապետական կոնդակով նուիրակներ չընեն ուր որ հարկն է, իսկ նուէրները բաշխվեն վանքերին, Կ. Պօլսում կայացած ժողովի միջոցով:
Երբ և Զ-րդ յօդուածներով առաջարկվում է սահմանել եպիսկոպոսները թիւը կարեւորութեան

հետեւ հետադրել. Օգոստոսի 18-ին Պարսկաստանի նախարար Կոչված վանքում ուխտաւորների անդին բազմութիւն էր հաւաքվել: Ես ականատես էի հայերի և պարսիկների մէջ ծագած սարսափելի ընդհարման, որը վերջը սպառնալի կերպարանք առաւ: Հայերը ջարդեցին պարսիկներին: հայերից 1 սպանված է, մէկը վիրաւորված: Պարսիկները լեռը բարձրացան. հայերը սպաստանվեցան վանքի դաւթում. հրացանաձգութիւն սկսվեց. երեկոյան պարսիկները փախան: Հետեւեալ օրը ուխտաւորները անցան սահմանը: Մանրամասնութիւնները նամակով:

Վ.Ա.ՂԱՐՇԱՊԱՏԻՑ միզ գրում են օգոստոսի 11-ից հետեւալը. «Այս քանի օրերս եղանակ մեղանում փոխվեց. տաքութիւնը սենական հասնում է 27 աստիճանի: Ոչ մի տարի այսքան շոգ չէր և այդքան չէր զգացվում ջրի պակասութիւնը: Լամպու ջուր համարեալ չը կայ և դժուարութեամբ է ձարվում: Բամբակի ցանքերը չորացան: Ժողովուրդը օգնութիւն է խնդրում: Պ. Գաւառապետը կարգադրութիւն արեց, որ զիւղապէր իրանց կարօտ հանդերի համար օգուտն Օշականի և Աշտարակի ջրերից:»

Մեզ գրում են ԷԶՄԻՍՑԵՆՑ, որ հոգեւոր ձեւմարանի ուսուցիչները շատերն այս տարի արձակուրդն, ոմանք էլ ամբարնոց քմացին, բացի պ. Սերբակ Մանդրեանից: Ստում են, որ պ. Մանդրեան քանի մի ամիս առաջ դիմել էր սինոդին, խնդրելով որ փոխարինարար արվի իրան 2000 ռուբլի, և այդ գումարը նա յանձն էր առնում չորս տարվայ ընթացքում մաս մաս հատուցանելու: Սակայն սինոդը մերժեց պ. Մանդրեանի պահանջը:

Շառչե՛ք գաւառակի ՕՐՔՐՔԱԿԵՐՏ զիւղից միզ գրում են հետեւալը. «Սմառը գաւառն պէս թուրք աւաղակների խմբը սկսել են երևան գալ անտառներում և մօտակայ սարերում. նրանք անխիղճ կերպով կործարում և կոտորում են ձանապարհներով անցուղիք մտողներին: Գաւառապետի և պահպան ձիւղերի թղտը ջանքերը աւաղակներին ձերբակալելու՝ ոչ մի արդիւնք չեն ունենում դեռ ևս:»

ՆՈՐ-ՆԱՒԻՋՆԻՍՏԱՆԻԿ միզ գրում են, որ Սուրբ-Խաչ վանքի ուսուցիչները շինութիւնը այս տարին

համեմատ և թէ առանց հայրապետական կոնդակի չընդունվին չընդ որոշեալով: Զը նախած, որ այդ առաջարկութիւնները տաճկահայոց համար շատ պատաւեր և ձեռնտու էին, այնուամենայն 1814 թ-ի մայիսի 3-ին, Կ. Պօլսի պատրիարք Արքայնի կաթողիկոս Գիւրգենի տաճկահայոց կողմից մերժեց Եփրեմի առաջարկութիւնները, ասելով թէ՛ «սինոդը կաթողիկոսին զործակից ձանաչել չէր կարող, վասն զի զրանով սահմանափակած կը լինենք արգելադրել կաթողիկոսների իրաւունքները:»

1827 թ-ի հոկտեմբերի 2-ին Երևանի առեմբը ընդհանրական կաթողիկոսի բուն վիճակն և զոգ Արարատեան նահանգը, սրա հետ ևս ընդհանուր հայոց մայր աթոռը, ուսաց իշխանութեան տակն անցաւ: Այդ աթիթով Եփրեմ կաթողիկոսը Նիկողայոս կայսրին շնորհաւորական թուղթ գրելով, մի և նոյն ժամանակ խնդրեց, որ թոյլ տայ օձել Միլիտանի կաթողիկոս ամենայն հայոց, և ինչն առանձնապէս, բայց կայսրը, իր շնորհաւորական հետ առաջարկեց Եփրեմին շարունակել իր իշխանութիւնը:

1830 թ-ի հոկտեմբերի 8-ին Եփրեմը, Էջմիածնի սինոդի անունով նորից հրաժարական տուաւ: Սինոդն ընդունեց և մատոյց ի գիտութիւն կայսրին, որ կտն Պասկևիչի միջոցով Եփրեմի դաւաժուութեան իրողութիւնը ստուգելուց յետոյ, հրամայեց հայ եկեղեցու բուն նախնական սովորութեան համեմատ աշխարհականների և հոգեւորականների ժողովի ջուկներով ընտրել երկու կաթողիկոսացու և առաջարկել ի հաստատութիւն Եփրեմի նախազգեսթեամբ, և հակառակ նրա ցանկութեան, փոխանակ Նիրսէսի, ընտրվեցին:
1) Թիֆլիսի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոս կարեցից և 2) կաթողիկոսական տեղակալ Մարտիրոս եպիսկոպոս: Յովհաննէս կարեցիցն ստանալով ձայնների բազմութիւն, հաստատվեց կայսերական հրովարտելով, և օձվեց կաթողիկոս: 1831 թ-ի նոյեմբերի 8-ին՝ Յովհաննէս Ղ կաթողիկոսին արգելեց անուհետ պարսից շահ և

րի չի աւարտվի և ուսումնարանի համար ժամանակաւոր շինութիւն չը լինելու պատճառով ուսումնարանն այս տարի փակ կը մնայ: Ռուսական տարաբնակները միւր գնում է վարդիկայ հայոց գիւղերից մէկում ուսուցչի պաշտօն է ստանում:

ԿՕՋՕԻՅ միզ գրում են. «Շուր օրերից յետոյ, օգոստոսի 15-ի գիշերը կարկառաւոր յորդաւատ անձրև եկաւ և մի անգամից հովացրեց օդը:»

ԵՐԵՎԱՆԻՑ միզ գրում են. «Մեր նահանգապետ Գեորգի ճըրճէ շատ խելացի կարգադրութիւն է արել նորերում: Կնչպէս յայտնի է մեր թուրք ազգաբնակիչները Մահարամի սուգի օծոն օրը զուրս էր գալիս իւրերանչլուր մէջիդից զէպիփոզոց և սուգ անողները անցնում էին փողոցներով արևելի մէջ շողայթած, իրանց մերկ մարմինը շղթաներով ձեռնուով, գոռալով ու ամբողջ օրը ահազին աղմուկներ հանելով: Այդ վայրերի ծխակատարութիւնը շարունակվում էր ամբողջ շաբաթը և կատարելա զգուցիք ու զայրոյթ էր պատճառում ժողովրդին, իսկ մանուկներին ա՛ն ու սարսափ էր պատճառում: Այժմ պ. նահանգապետը, օգտվելով մի նին կարգադրութիւնից, որը միջև այսոր անգործադրելի էր մնացել, և որով արգելում էին այդ տեսակ հանդէսները հրապարակապէս կատարելու, հրամայեց որ կարգադրութիւնը կատարվի և մահմետականների այդ սուգի հանդէսները խափու արգելին փողոցներում, այլ կատարվին միայն մէջիսներում: Զինք կարող չը համակրել պ. ճըրճէի այդ խելացի կարգադրութեան, որով վերջ է դրվում արևահայ և վարչերի ծէսի կատարվելու Երևանի փողոցներում:»

Մեզ գրում են ՆՈՐ-ՆԱՒԻՋՆԻՍՏԱՆԻԿ հետեւալը. «Հանդուցեալ Աղաման, իր այստեղ եղած ժամանակ, 1881 թ-ից սկսած, դանազան ժամանակներին ներկայացուցեալ տաղով իր տաղանդը յարգողներից ստացել է այլ և այլ ընծաներ: Թէ թանազան իրերից և թէ պականից բաղկացած Այդ բոլոր պարգևները, ինչպէս լուծ կեց, ինքն հանդուցեալ յանձնել է պահելու Նոր-Նախընթացի կրթիտական ընկերութեանը (Начин. Крещенное Общество): Հանդուցեալ իր կենդանութեան ժամանակ ոչինչ կարգադրութիւն արած

տաճկաց սուլթանի հրովարտակներն և ստանալու վրա մտածել, և առաջարկեց խմբագրել Ղուկասի օրով սկզբնաւորած և Կահնիկի օրով փոխուլած ու հաստատուած սինոդի սահմանադրութիւնը: Յովհաննէս Ղ-ի խմբագրած սահմանադրութիւնը էական փոփոխութեամբ հաստատեց Նիկողայոս կայսրը 1836 թ-ի մարտի 11-ին, իսկ 1837 թ-ի փետրվարի 22-ին սինոդի բացմամբ սկսաւ գործադրել Ռուսաստանի հայոց բոլոր վիճակներում: Այս սահմանադրութեան, կամ «Պօլսեթիկի» մէջ յատուկ յօդուածներով նախազօժւած են և կաթողիկոսի, և տեղակալի կամ սինոդի նախնադամ-նախադահի, և սինոդի իրաւունքները:

Պօլսեթիկի ճիշդ գործադրութեան մասին շըրջանակված է մի աշխարհական աստիճանաւոր, որ կոչվում է դատախազ, կամ ւարձկուրդ:»

Այսօր ոչ մի խելքը զլինի մարդ չէ կարող պնդել, թէ Պօլսեթիկի հաստատվելուց յետոյ, կաթողիկոսական կոնդակով հնարաւոր կը լինի հաստատել տեղակալ, որ կարող լինի գործադրել իր իրաւունքները կոնդակի արամագրութիւնների համեմատ և անկախ Պօլսեթիկից: Կաթողիկոսի կոնդակի գործութեամբ հաստատված տեղակալը չէ կարող երբէք վայելիլ այն իրաւունքները, որ վայելում էին Պօլսեթիկի հաստատվելուց առաջ եղած տեղակալները: Սինոդի նախնադամ-նախադահ, որ է իսկապէս տեղակալ, մեր շեղուի յորջորջման համեմատ, պարտաւոր է գործել միայն և եթէ Պօլսեթիկի համաձայն, կաթողիկոսի կոնդակով ոչ կառնալանայ և ոչ էլ կը պակասի նրա իրաւունքը: Ուրեմն ասել, թէ այս ինչ տեղակալը կաթողիկոսի կոնդակ ունենալով կարող էր այս ու այն անել և միւրը չունենալով այդպիսի կոնդակ չէ կարող նոյն անել, կը նշանակէ խաբէլ ինքն իրան և իր ընթերցողներին մոլորեցնել: Պօլսեթիկի հաստատվելուց յետոյ եղած բոլոր տեղակալները եղած են սինոդի նախնադամները. կաթողիկոսների կոնդակով դեռ մէկը տեղակալ չէ եղած, որ չը լինել մի և նոյն ժամանակ սին

չէ այդ իրեղենների մասին: Իսկ այժմ, ինչպէս մեզ պատմեցին, բանկի կառավարիչները չը գիտեն ինչ անեն այդ իրերը: Այդ պատճառով լաւ կը լինէր, մեր կարծիքով, եթէ հանդուցեալէ բաց, սիկին թաճեան, կարգադրութիւն անէր, որ այդ իրերն էլ նոյնպէս նուիրվէին Թիֆլիսի հայոց թատրոնական ակումբին, ինչպէս որ յարգելի տիկինը վարվել է հանդուցեալի բնական զգեստների հետ էր: Վատ չէր լինի եթէ տիկինը իրաւունք տար ակումբին Աղամանի ցիր ու ցյան եղած բոլոր բեմական ընծաները հաւաքել և այդպիսով փողովի ժողովածու կարգել մեր վաղամուկի, տաղանդաւոր դերասանի բեմական բոլոր ընծաներից: Մեր կարծիքով, ինչ որ Նոր-Նախընթացի մէջ մնացած իրեղեններն և վերաբերվում, նրանց ստանալն ու հացնելը կարելի է յանձնել պ. Ղուկաս Աղապետանին, որը, յոր ունենք չի մերժի այդ տեսակ յանձնարարութիւնը կատարելու:»

Մեզ գրում են ԵՐԵՎԱՆԻՑ, որ մօտ օրերս այդ քաղաքում մի 60 տարեկան ծերունի պատվել մի 22 տարեկան այրի կնոջ հետ, որը իր առաջին ամուսնու հետ ընդամենն ապրել է 3 ամիս: Թղթակիցն ակեացնում է, որ այդ տեսակ զէպերը դառնալով շատ են պատահում:

Լուծ կեց որ Թիֆլիսի Միջի-Փողոցի մօտ, կաթօղիկ փողոցում գտնվող եկեղեցին շուտով յանձնվելու է հայ-կաթօղիկներին և բոլոր արարողութիւններն այդ եկեղեցում պատահետ կը կատարվեն հայերէն լեզուով:

Մեզ խնդրում են տպագրել հետեւալ յայտարարութիւնը: ՄՕՍԿՎԱՑՈՒՄ, սեպտեմբերի 1-ից, ներկայ 1891 թ-ի, բացվում է երեցեցողութեան դպրոց, երգչուհի օրիորդ Նինա Կորգանովա-Գարիալի ղեկավարութեամբ: Գպրոցի կառավարչուհի, օրիորդ Կորգանովա, հիմնում է իր դպրոցում երեք հատ ստիպենդիաներ: 1) իր հանդուցեալ եղբոր, յայտնի կրթիչու Գենարի Կորգանովի անունով, 2) իր հօր, Յովսէփ Կորգանովի անունով և 3) Պետրոս Աղամանի անունով: Առաջին ստիպենդիայով արդէն ընդունված է Արշակ Կոստանդնուպոլսից: Երկրորդը, որը մի անգ ընկնող տէսօր ձայն ունի, իսկ երկու մնացած ստիպենդիաները դեռ ևս ազատ են: Ստիպենդիաներից կարող են օգտվել թէ տղամարդիկ և

նողի նախնադամ Նիլ-Մակար կաթողիկոսը չը կամենար, որ ներկայ ամենապատիւ Երևանի սրբազանը լինել տեղակալ, անտարակոյս կը փութար առաջարկել սինոդի անդամ մի մայրախն, որ լինէր յարմար Պօլսեթիկի պահանջին և դասնար նախնադամ սինոդի, կամ տեղակալ: Գեորգ Վ-որդ կաթողիկոսից իր հիւանդութեան վերջին օրերում Մակար արքեպիսկոպոսին արված տեղակալութեան կոնդակը ձեռնելու որ լինեց պարտաւորված իր կողմը անսկախի դասն դրակալը կը վերաւորէին, ուստի լաւ կեց համարում դեռ ևս լուել այդ մասին:

Վերջացնելով այս յօդուածը, պնդում ենք, որ նախ պ. Եւանդուկեան չարաչար անալիզով կարծելով թէ տեղակալ Երևանի սրբազանը թող էր սինոդի անդամներ առաջարկել իր աստուծոյն, եթէ ունենար հանդուցեալ կաթողիկոսից տեղակալութեան կոնդակ: Երկրորդ եթէ Երևանի սրբազանի առաջարկութիւնը համաձայն չը լինէր Պօլսեթիկի արամագրութեան սինոդի դատախազը ինքն կը բողոքէր այդ առաջարկութեան դէմ. երրորդ՝ երևակայութեան ծերունի կեց համարում այն բոլոր պնդումները, թէ Ղուկաս արքեպիսկոպոսը՝ Գեորգ արքեպիսկոպոսը կոնդակով են տեղակալ կարգվել և ոչ թէ Պօլսեթիկից գործելուց: Երբ Երևանի սինոդի անդամներ լինելով շատ աւազուածայն նախնադամ են կղել Պօլսեթիկի համաձայն լուստի կրկնում կեց և պնդում, որ Երևանի եպիսկոպոսը տեղակալ է և յատկապէս այն մի և նոյն իրաւունքներով, որպիսի իրաւունքներով որ տեղակալ էին և Ղուկաս և Գեորգ: Մակար արքեպիսկոպոսները: Որ ունկեց ակամայս լուսնի լուսնից:

ՊԵՏԵՐՈՒԳՐ, 19 օգոստոսի: «Бирж. Вѣд.» լրագրեր հաղորդում է, որ մի առանձին յանձնաժողով է հիմնվում բոլոր կառավարչական հիմնարկությունների և վարչությունների ներկայացուցիչներից՝ ուստաց առևտրական ծովագնացություն հարցը մշակելու նպատակով: Յանձնաժողովին մասնակցելու համար կը հրավերվեն զանազան տեղական հիմնարկությունների ներկայացուցիչները, Բալտիան, Սև, Ազովյան և Կասպից ծովերում առևտրողները և այլ ձեռնհաս անձինք:

ՆԻՒԵՐՈՒԿ, 19 օգոստոսի: Ստեպավիլի մաս, կատարել գետի վրա, հիստորիկ կարգվածությամբ տեղի ունեցած մի սարսափելի աղէտ. մեկ ժամում 45 բույն արագություն ընթացող գնացքը կէս զեյերին մոտեցավ կամուրջին, որի վրա փռած գերանների շտրճով բեկները մեջ ճեղքեր էին բացվել: Երկուսուկուր, թռչելով կամուրջի պատշգամբից, ընկավ, բազմաթիվ իր կտակից վարձուներ զէսի գետը 91 ոտնաչափ բարձրությունից: Հասարակականությունը 21 սպանված են և 29 հոգի ծանր վիրավորված են:

ԿՕՊԵՆՀԱՅԷՆ, 19 օգոստոսի: Շվեդիայի թագավորը Ֆրեդերիկսոնը կը դադարեցնի 1-ին (նոր տոմարով) և 4-ին, կեսօրից յետոյ կը վերադառնայ: Թագավորը Դանիայի թագավորին և նրա բարձր հիւրերին հրավերեց մասնակցել նապատարների որսին սեպտեմբերի 5-ին, Խվեյն կղզու վրա: Հրահանգ ընդունվեց:

ՆԻՒԵՐՈՒԿ, 19 օգոստոսի: Բարձրագույն յետ է քաջվում դէպի Սանտաբար, որի պատերի մասնա հրամայեց կենսաբանական զորքերը: Նախագահը կարևորին չափ շատ զորքեր բերել տուեց հիստորիկ և հարապային նախնականություն, և այժմ կարգավորվեան շտրճով կոնդեմնատներից առևտրի զորք կուժենայ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 19 օգոստոսի: Այստեղ չեն հաւատում, որ Բալտիան կատարելապես ջարդ է կերել, որովհետև լուծային երկիրը պաշտպանություն համար գեղեցիկ պայմաններ ունի:

ՖԻՆԼԱՆԴԻԱ, 19 օգոստոսի: Կես դիտերին այստեղից շոգեմանով ճանապարհ ընկան հայրենիք վերադարձող զանազաններ: Նրա նրանք քաղաքի միջով անցնում էին, փոթորկալից ցոյցեր տեղի ունեցան. «Ժիլի» բարձր աղաղակներին ունգաբացից պատասխանում էին «էլիէն» և «կորչին»

խորվաթները աղաղակներով: Գալմատայից շոգեման նստելով, աղաղակում էին «Թող կորչի Ունգարիան»: Ցոյցերը քաղաքում շարունակվում էին և վերջացան կռիվներով, որոնց ժամանակ մի քանի խորվաթ ուսանողներ վիրավորվեցան: Տեղի ունեցան 19 կալանաւորումներ:

ՎԻԵՆՆԱ, 19 օգոստոսի: Հրատարակված է կայսերական հրաման բանակային և հերցեգովինական շորս նոր գունդեր կազմակերպելու մասին: Այդպիսի դիտերի թիվը 40-ի կը հասցնվի:

Ս. ՊԵՏԵՐՈՒԳՐԻ ԲՈՐՍԱ

Օգոստոսի 16-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծե	98	75	4
Բերլինի վրա 100 մարկ	48	52 1/2	
Փարիզի վրա 100 ֆրանկ	38	87 1/2	
Ոսկի	7	95	
Մարապյին կուլոններ	159		
Արծաթ	1	05	
Բորսային դիվիդենդներ	4	50/0	
Պետ. բանկի 5% տոս 1 շրջանի	103	50	
— — — — — 2-րդ	103	12	
— — — — — 3-րդ	—	—	
— — — — — 4-րդ	—	—	
— — — — — 5-րդ	—	—	
— — — — — 6-րդ	102	75	
60% ոսկեայ բնուս	161		
4% ոսկեայ փոխառություն	—	—	
Արևելյան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	—	
— — — — — 2-րդ	101	—	
— — — — — 3-րդ	101	75	
Ներքին 5% առաջին փոխառութ.	235	75	
— — — — — երկրորդ	225	50	
Պետական. երկաթուղային բնուս	104	—	
5 1/2% բնուս	—	—	
4% ներքին փոխառություն	95	50	
5% գրաւ. թղթ. աքի. կալ. բանկի	102	25	
Ազն. կալ. բանկի խաղարկության գրաւ. թղթ.	211	—	
5 1/2% վկայակ. զեւլ. հոդ. բանկի.	104	12	
4 1/2% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մտալ.	150	—	
— — — — — թղթաւ.	101	—	
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերության օրվագրաններ	101	62	
Մոսկվայի քաղաք. օրվագրաններ.	101	75	
Օդեսայի	101	87	
Թիֆլիսի	—	—	
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	—	—	
— — — — — Գուժայիսի	—	—	

Պետերբուրգի բորսայի արամադրությունը թույլ է:

Խմբագիր-հրատարակող: ԳԻՒԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆՈՐ ՀԻՒՐԱՆՈՑ „ԴԱՆԻԱ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ
Քաղաքի կենտրոնում, Գոլոմիսկի պրոսպեկտի վրա: Գեղեցիկ և մաքուր կահավորված սենյակներ. օրը 60 կոպեկից մինչև 5 ռուբլի. ամսով մեծ զիջում է անվում: Կերակուրները թարմ և համալի: 4—36

Բժշկականության մի ուսանող ՊԱՐԻՋՈՒՄ պատրաստ է հարկ եղած դիտերություններն ընծայել այն ամեն հիւանդներին, որոնք Պարիզ են գալիս իրանց ցանկեր զարմանելու, ցոյց տալով նրանց յարմարադոն հիւանդանոցներ և ամենայնայնս բժիշկների անուանների վրա մասնացոյց անելով մի և նոյն ժամանակ կատարելով և թարգմանի պաշտոնը:
Հասցեն իմանալու համար դիմել „Մշակի“ խմբագրությունը: 6—6

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ԲԱԳՐԱՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Ընդունելություն և քննություն աշակերտների կը սկսվի օգոստոսի 26-ին, իսկ ուսումը սեպտեմբերի 2-ին: Գանոսկայա և Տադոյալ պ. ծոց № 38. 2—5

ԵՐԿՈՒ ՎԱՐՃՈՒՇԻՆԵՐ ցանկանում են դասեր ունենալ հայոց ծխական դպրոցներում ձեռագործի, թուարանություն, զճարգրություն, վայելչագրություն: Պայմանների մասին դիմել. Արմանսկի բազար, Մյուսնի րայե, ծոց Աբեզոմովա, № 3. 3—3

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ ՕՐԲԵԼԵԱՆՑԻ

Նորին գերագնացություն կովկասեան ուսումնարանական շրջանի պ. Հոգաբարձուի կարգադրությամբ 1890 թվի դեկտեմբերի 5-ից և ստացել եմ իրաւունք նաև պանսիոն ունենալու: Պանսիոնում աշակերտները պատրաստվում են պետական բոլոր ուսումնարանների համար: Աշակերտներն ընդունվում են թուշակաւորներ, կիսաթոշակաւորներ և երթեկներ ձեռնառու պայմաններով: Պանսիոնը գտնվում է Բեհրեթեան փողոցի վրա, № 17: 3—4

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ
ТОВАРИЩЕСТВО
МЕХАНИЧЕСКАГО И ЧУГУННО-ЛИТЕЙНАГО ЗАВОДА
БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ
ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и заводскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Щеретовыхъ, вальцовыхъ поставовъ крупосѣекъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверіо. Лѣсопильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзокъ, кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна. Маслобоекъ, брадспойтовъ и пасовъ. Конныхъ грабель «Голинсвортъ». Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и мѣди. Выполненіе всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокуренныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножѣлезныхъ дорогъ. Складъ локобилей, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми барабанами и конныхъ приводовъ известной фирмы Клейтонъ и Шутливортъ въ Линкольнѣ, и Вѣнѣ. Главнй складъ жатвенныхъ машинъ и косилокъ «Жѣлзная рама» и «Континенталь» Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ
Г. ДАВЕРІО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллиптъ для постройки пассажирскихъ и буксирныхъ пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднятіе на эллиптъ судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ н Д. Г. Я. Золотухинъ, Николаевскій пер. д. Арт. Яблокова, противъ Реального училища кв. № 8.

79—100 (Կ. 2.)

ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Չ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթություն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործնական քանակարհով հմուտ հաշուապահներ: Առևտրողները ստանում են ատտեստատներ:
Առևտրիկի տարիկայը սորա են 1) Առևտրական հաստատություն, 2) Առևտրական թուղթաբանություն, 3) Հաշուապահություն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուղթաբանություն համընդհանր վրա, 5) Առևտրական թղթապահություն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրություն և 7) զեղազրույթություն:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելությունները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնովի բնակարանում, Սոլոլակով, Աղեքսանդր Փրիդոնովի տանը, № 9 Սերգիևիվայա և Նադարնայա փողոցների անկյունում, զեղատան դիմաց: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԵՍ եղբ. Ծովանովների բանկային գրասենյակում և կուրսեր հիմնովի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնովին.—въ Тифлисъ, С. П. Мануэлянци.
14—25 (Ե. Ե.)

ՍՈՒՐԵ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ օրիորդաց միասնան ծխական ուսումնարանի աշակերտուհիների ընդունելությունը կը սկսվի օգոստոսի 25-ից: Իւրաքանչիւր աշակերտուհի պէտք է ներկայացնէ իր ծննդեան և ծաղկի վկայականները:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՇԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ուսումնարանի աշակերտուհիների ընդունելությունը կը սկսվի օգոստոսի 25-ից: Ամեն խնդրող պարտական է ներկայացնել իր ծննդեան, ծաղկի և ուսման վկայականը: Սերգիևիվայա փողոց, թիւ 19: 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Ելալուսում է սրանով, որ ընկերությունս 1891 թվի անդամները կարող են ստանալ կենտրոնական գրավածառանցից ընկերության հետեւալ հրատարակությունները:
1) Տօրաոյ—Աստուած վիտէ արդարն ու մեղաւորը:
2) Վարաներ—Հաւատարիմ Սպիտարին:
3) Պետաւոցի—Լինհարդ և Գեարարդ:
4) Նալ և Գամայանտի:
5) Ուղընհարն—Նաւի փոքրաւորը:
6) Սպիլի՛ Ուսենց Թովեկի:
5—13

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍՍՃԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կաննաւոր և ուղղակի երթեկութիւն ԼՈՆԴՈՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Ուրբաթ, 23 օգոստոսի (4 սեպտեմբերի) դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ TAMISE (ՏԱՄԻՉ) շոգեմար, նաւապետ CHARWAY (ՇԱՐԿԱՅ) զէպի Կ. Պօլիս, Մարսել, Հալիք, Լոնդոն, մասնաւոր և միջանկեալ նաւահանգիստները:
Ազնանները ԲԱԹՈՒՄԻՄ՝ ՄԱՍՍՃԸՐԻ, ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ ԳԵՐՈԳ ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՑ, իսկ ԲԱԳՈՒԻ մէջ՝ ԳՕԻՂԻՈՒՍԸ:
2—2